ՀՈՎՀԱՆՆԵՍ ԹՈՒՄԱՆՅԱՆԻ
ԹԱՆԳԱՐԱՆ

Հայաստանի
Հանրապետության
մշակույթի նախարարություն

МУЗЕИ ОВАНЕСА ТУМАНЯНА
Министерство культуры Республики
Армения

MUSEUM OF HOVANESS
TOUMANIAN
Ministry of Culture
of the Republic of Armenia

*Հայաստանի Հանրապետություն, ք. Երևան, Մոսկովյան 40, հեռ. 51-60-21, 56-00-21*
Республика Армения, г. Ереван, ул. Московян 40, тел. *51-60-21, 56-00-21*
Moskovian Str. 40, Yerevan, Republic of Armenia, tel: 51-60-21, 56-00-21

*0-12-18*
*01.04.2014թ.*

<<ԳԱԿ-ՇՀԱՇՁԲ-11/3>> ծածկագրով
շրջանակային համաձայնագրերի միջոցով
գնում կատարելու ընթացակարգի հնարավոր
մասնակիցների ղեկավարներին
**ashxatanq-11-3@shh.gnumner.am**

Հարգելի մասնակից

N <<ԳԱԿ-ՇՀԱՇՁԲ-11/3>> ծածկագրով ընթացակարգի շրջանակներում <<Հ. Թումանյանի թանգարան>> ՊՈԱԿ-ի կարիքների համար անհրաժեշտություն է առաջացել ձեռքբերելու “Գնումների աջակցման կենտրոն” ՊՈԱԿ-ի և Ձեր կազմակերպության միջև կնքված շրջանակային համաձայնագրով նախատեսված Տպագրական ախատանքներ: Սույն հրավերի (ծանուցման ) ծածկագիր է հանդիսանում **<<ՀԹԹ-ՇՀԱՇՁԲ-14/1>>:**

Հայտնում ենք, որ գնման առարկայի վերաբերյալ Ձեր կազմակերպության հայտն անհրաժեշտ է ներկայացնել ք. Երևան Մոսկովյան 40 հասցեով մինչև 2014թ-ի ապրիլի 11-ը, ժամը 14:00-ն: Ընթացակարգի հայտերը ստանում և հայտերի գրանցամատյանում գրանցում է հանձնաժողովի քարտուղար ` Հ. Դերմենջյանը:

Հայտերը քարտուղարի կողմից գրանցվում են գրանցամատյանում` ըստ ստացման հերթականության` ծրարի վրա նշելով գրանցման համարը, օրը և ժամը: :

Հայտերը կբացվեն <<Հ. Թումանյանի թանգարան>> ՊՈԱԿ-ի վարչական շենքում` ք. Երևան Մոսկովյան 40 հասցեում` 2014թ. ապրիլի 1 1-ը, ժամը 14:00- ին: Գ նման առարկա է հանդիսանում`<<Հ. Թումանյանի թանգարան>> ՊՈԱԿ-ի կարիքների համար տպագրական աշխատանքների ձեռքբերումը:

<<Հ. Թումանյանի թանգարան>> ՊՈԱԿ-ի կարիքների համար տպագրական աշխատանքների կատարման տեխնիկական բնութագրերը, ինչպես նաև գնման առարկայի մասնագիրը, տեխնիկական տվյալները և այլ ոչ գնային պայմանների ամբողջական և համարժեք նկարագրությունը կազմում են պայմանագրի անբաժանելի մասը, որի նախագիծը ներկայացված է սույն հրավերի (ծանուցման) N 1 հավելվածում:

Մասնակիցները հայտով ներկայացնում են իրենց կողմից հաստատված`

ա. գնման ընթացակարգին մասնակցելու դիմումը (Հավելված N 1), ընդ որում պարտադիր է նշել Մասնակցի էլեկտրոնային փոստի հասցեն,

բ. գնային առաջարկը (Հավելված 2): Մասնակցի գնային առաջարկը ներկայացվում է ինքնարժեք, և ավելացված արժեքի հարկ ընդհանրական բաղադրիչներից բաղկացած հաշվարկի ձևով:

Հայտն անհրաժեշտ է ներկայացնել **NԳԱԿ-ՇՀԱՇՁԲ-11/3** ընթացակարգի հրավերով սահմանված կարգով:

Կից ներկայացնում ենք կնքվելիք պայմանագրի նախագիծը:

Մասնակցի կողմից հայտի ներկայացումը պարտադիր չէ:

<<Հ. Թումանյանի թանգարան>> ՊՈԱԿ-ի էլեկտրոնային փոստի հասցեն է`museum@toumanian.am :

Եթե, Հրամանով հաստատված ցանկում ներառված կոնկրետ գնման գործընթացի մասով, Հայաստանի Հանրապետության նորմատիվ իրավական ակտով նախատեսված է, որ մասնակիցը <<Գնումների մասին>> օրենքի 5-րդ հոդվածով նախատեսված պահանջներին իր տվյալների համապատասխանության ապահովման և/կամ գնահատման համար պետք է պատվիրատուին ներկայացնի այլ (լրացուցիչ) փաստաթղթեր և/կամ տվյալներ, ապա նշված փաստաթղթերը և/կամ տվյալները պատվիրատուին ներկայացնում է ընտրված մասնակիցը` մինչև կարգի 110-րդ կետի 7)-րդ մասով սահմանված կարգով պայմանագրի կնքումը: Ընդ որում`

- նման փաստաթղթերի և/կամ տվյալների ներկայացման և գնահատման կարգը սահմանվում է շրջանակային համաձայնագրով` հիմք ընդունելով <<Գնումների մասին>> օրենքի 31-րդ հոդվածի 5-րդ մասի և կարգի 75-րդ կետի պահանջները,
- նման պահանջի դեպքում, մասնակիցներից պահանջող փաստաթղթերի ցանկը և վավերապայմանները, ինչպես նաև մասնակցության իրավունքի և որակավորման գնահատման կարգը պետք է նախատեսված լինի շրջանակային համաձայնագրեր կնքած մասնակիցներին պատվիրատուի կողմից ուղարկվող հրավերով (ծանուցումով)` հղում կատարելով Հայաստանի Հանրապետության նորմատիվ իրավական ակտի համապատասխան (կոնկրետ) դրույթին ի կատարումն որի պահանջվում են լրացուցիչ փաստաթղթերը և/կամ տվյալները:

Պատվիրատու` <<Հ. Թումանյանի թանգարան>> ՊՈԱԿ :

Հեռախոս` 010-51-60-21, 010-56-00-21

Թանգարանի տնօրեն Ն. Խաչատուրյան